‹‹ ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ›› ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
<<ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԾՁԲ-20/3»

ք. Մեղրի << 15 >> հունիսի 2020թ.

‹‹ Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ›› ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Սուրեն Մարտիրոսյանը մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<**Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների**>> մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայության անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ապրանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 206000 (երկու հարյուր վեց հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30 դեկտեմբերի 2020թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ [illegible] կամ վերստուգումների կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

տեղեկություններ և

ւթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և Հայաստանի ալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի ունի անրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է __8__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ՝

“Մեղրու ՏԲԿ” ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ “ ՎՏԲ Հայաստան Բանկ”ՓԲԸ Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն՝ / / Լ.Վարդանյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ Սուրեն Մարտիրոսյան
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Ագարակ,Չարենցի 6/4
Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակ մ/ճ
Հ/Հ 1150005061501585
ՀՎՀՀ 79515417
էլ. հասցեն՝ arpine.movsisyan.91@mail.ru
Հեռ. 077220557

Ա/Ձ Ս. Մարտիրոսյան

Կ.Տ

Հավելված
<<_15_>> հունիսի 2020թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԾՁԲ-20/3» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը
1	50111130	ՈՒԱԶ 39623 -ի անիվների փոխում բալանսավորումով	ՈՒԱԶ 39623 -ի անիվների փոխում բալանսավորումով	հատ	1500	8	12000
2	50111130	ՈՒԱԶ 39623 -ի անիվների վերանորոգում կպցնում փոխում	ՈՒԱԶ 39623 -ի անիվների վերանորոգում կպցնում փոխում	հատ	1000	4	4000
3	50111130	ՈՒԱԶ 39623 -ի անիվների հավասարեցում, անվաբացերի ուղղում	ՈՒԱԶ 39623 -ի անիվների հավասարեցում, անվաբացերի ուղղում	կոմպլեքտ	8000	2	16000
4	50111130	ՎԱԶ 21213-ի անիվ 205/70/16 անիվների փոխում բալանսավորումով	ՎԱԶ 21213-ի անիվ 205/70/16 անիվների փոխում բալանսավորումով	հատ	1500	16	24000
5	50111130	ՎԱԶ 21213-ի անիվ 205/70/16 անիվների վերանորոգում կպցնում փոխում	ՎԱԶ 21213-ի անիվ 205/70/16 անիվների վերանորոգում կպցնում փոխում	հատ	1000	10	10000
6	50111130	ՎԱԶ 21213-ի անիվ 205/70/16 անիվների հավասարեցում, անվաբացերի ուղղում	ՎԱԶ 21213-ի անիվ 205/70/16 անիվների հավասարեցում, անվաբացերի ուղղում	կոմպլեքտ	6	6000	36000
7	50111130	ՋԻՆԲԵՅ 195/L/15C անիվների փոխում բալանսավորումով	ՋԻՆԲԵՅ 195/L/15C անիվների փոխում բալանսավորումով	հատ	12	1500	18000
8	50111130	ՋԻՆԲԵՅ 195/L/15C անիվների վերանորոգում կպցնում փոխում	ՋԻՆԲԵՅ 195/L/15C անիվների վերանորոգում կպցնում փոխում	հատ	8	1000	8000
9	50111130	ՋԻՆԲԵՅ 195/L/15C անիվների հավասարեցում, անվաբացերի	ՋԻՆԲԵՅ 195/L/15C անիվների հավասարեցում, անվաբացերի	կոմպլեքտ	6	10000	60000

		ուղղում	ուղղում				
10	50111130	ՈՒԱԶ 3962 235/75R15 անիվների փոխում բալանսավորումով	ՈՒԱԶ 3962 235/75R15 անիվների փոխում բալանսավորումով	հատ	4	1500	6000
11	50111130	ՈՒԱԶ 3962 235/75R15 անիվների վերանորոգում կպցնում փոխում	ՈՒԱԶ 3962 235/75R15 անիվների վերանորոգում կպցնում փոխում	հատ	4	1000	4000
12	50111130	ՈՒԱԶ 3962 235/75R15 անիվների հավասարեցում, անվաբացերի ուղղում	ՈՒԱԶ 3962 235/75R15 անիվների հավասարեցում, անվաբացերի ուղղում	կոմպլեքտ	1	8000	8000
Ընդամենը՝ երկու հարյուր վեց հազար դրամ							206000

Ծառայությունը նախատեսվում է գնել 2020 թ-ի ընթացքում: Յուրաքանչյուր ծառայության նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից:

Ծառայությունը մատուցվում է գնորդի կողմից ստացված պատվերից հետո 3 օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ"ՓԲԸ Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն ՝ / / Լ.Վարդանյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ Սուրեն Մարտիրոսյան
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Ագարակ,Չարենցի 6/4
Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակ մ/ճ
Հ/Հ 1150005061501585
ՀՎՀՀ 79515417
Էլ. հասցեն՝ arpine.movsisyan.91@mail.ru
Հեռ. 077220557

Ա/Ձ / / Ա. Մարտիրոսյան
Կ.Տ

Հավելված 2
<< _15_ >> հունիսի 2020թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԾՁԲ-20/3» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի դիմացվճարումներընախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստամիսների, այդթվում**							
Չ/h	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1;2;3;4;5;6;7;8;9;10;11;12	40	50	60	70	80	100	100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կրգով:

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ"ՓԲԸ Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն՝ / / Լ.Վարդանյան

ԿՏ

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ Սուրեն Մարտիրոսյան
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Ագարակ,Չարենցի 6/4
Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակ մ/ճ
Հ/Հ 1150005061501585
ՀՎՀՀ 79515417
էլ. հասցեն՝ arpine.movsisyan.91@mail.ru
Հեռ. 077220557

Ա/Ձ Ս. Մարտիրոսյան

ԿՏ